

ԼԵՅԼԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՎԱՂՆՃԱԳՈՒՅՆ ՎԱՅ ԸՆՏԱՆԻՔՆ ԸՍՏ ՎԱՅ–ՊՈԼԻՆԵՉՅԱՆ ԸՆԴՎԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Վերջին տասնամյակում գիտության տարբեր ճյուղերի՝ մարդաբանության, հնագիտության, ազգագրության, ծագումնաբանության եւ լեզվաբանության բնագավառներում կատարված բացահայտումները գիտնականներին ստիպում են վերանայել եւ վերարժեւորել բազմաթիվ կադապարային տեսակետներ, որոնք վերաբերում են մարդկության կյանքի տեւողությանը, առանձին ժողովուրդների ծագմանն¹ ու մարդկության կազմավորման վայրերի տեղորոշմանը²:

Անհայտության մեջ թաղված են նաեւ հայ ժողովրդի ծագման եւ «մանկության» հնագույն դարաշրջանների իրողությունները: Հայկական ընտանիքի, կենցաղի, կացարանների մասին ամենավաղ տեղեկությունները հաղորդում են հին հունական եւ հռոմեական աղբյուրները: Այդ պատճառով էլ այսօր այդ անթվակիր հազարամյակների հետ ցանկացած առերեսում, երիցս հետաքրքիր լինելուց բացի, նաեւ չափազանց խոստումնալից է: Հայ ժողովրդի չափազանց հեռավոր անցյալի հետ նման առերեսման հնարավորություն տալիս են հայ–պոլինեզյան բազմաբնույթ ընդհանրությունների վերհանումը եւ ուսումնասիրությունը:

Պոլինեզիայի ծայրարեւելյան՝ Զատկի կղզին (պոլինեզիական անվանումը՝ Rapa Nui) աշխարհի ամենափոքր բնակեցված կղզիներից է եւ ամենամեկուսի բնակեցված կղզին, որի բնակիչների համար, Կ. Ռաուլ-Լեշի դիպուկ բնորոշմամբ, «ամենամոտիկ մայրցամաքը լուսինն էր»: Մինչեւ ԺԸ. դարասկիզբն աշխարհին անհայտ եւ աշխարհից անտեղյակ այս «...կղզու նյութական եւ հոգեւոր մշակույթը շատ պահպանողական է եւ հնավանդ (արխաիկ)... Ո՛չ վաղ պոլինեզիացի վերաբնակիչներից

¹ Ն. Քոքսը, Արմենոյդ ռասսայական տիպի ծագումնաբանական խնդիրները Հայկական լեռնաշխարհում եւ հարակից տարածքներում, ԼՀԳ, 2012, №1, էջ 287, 292:

² <http://ankakh.com/article/32778/%E2%80%8B8Bhayastanyan-hnagituthyun-ashkharhi-hyet-pastyerilyezvov-e-khvosum--volvorti-hnchyeogh-dzyerbyerumnyere>

առաջ եւ ո՛չ էլ հետո Զատկի կղզում չեն եղել այլ ներգաղթյալներ, որոնք կարող էին լուրջ ազդեցություն ունենալ ռապանուլցիների մշակույթի վրա»³։ Երկարատեւ մեկուսացվածության հետեւանքով Զատկի կղզու լեզուն՝ ռապանուերենը եւս զերծ է մնացել օտար ազդեցություններից եւ ներկայացնում է պոլինեզիական նախալեզվին առավել մոտ, մասնագետների դիպուկ բնորոշմամբ՝ «պահածոյացած» վիճակ։ Այդ նույն պատճառով ռապանուերենն առավել հարազատորեն է ներկայացնում ժամանակագրական չափազանց հնագույն՝ նախաավստրոնեզիական լեզվավիճակը։ Քանի որ վերջին հետազոտությունների համաձայն՝ նրա տարիքը գնահատվում է 40 000–50 000 տարի, ռապանուերենը, այսպիսով, մի չափազանց հնագույն լեզվավիճակի արտացոլումն է։

Ռապանուի կղզու եւ ռապանուլցիների լեզվի, կենցաղի, կացարանների, սովորույթների եւ հսկա քարարձանների մասին առաջին տեղեկությունները տվել են հոլանդացի ծովագնաց Յակով Ռոգհեւենն ու նրա նավի անձնակազմը 1722 թվականին։ Շուրջ 50 տարի անց՝ 1770 թ., կղզում խարխալ են ձգել իսպանացի ծովագնաց Ֆերնանդո Գոնսալեսի երկու նավերը։ Իսպանացիները հասցրել են միայն իրենց թագավորի պատվին կղզին անվանակոչել Սան Կառլոս եւ հայտարարել Իսպանիայի սեփականություն։ 1774 թ. այնտեղ այցելել են անգլիացի ծովագնաց Ջեյմս Կուկի նավաստիները, որոնք գրի են առել որոշ տեղեկություններ։ 1786 թ. կղզի է ժամանել ֆրանսիացի Լապերուզը. ֆրանսիացիները կղզում ցանել են Եւրոպայից բերված մշակաբույսերի սերմեր, թողել են ընտանի կենդանիներ, որոնց կղզեբնակները շատ շուտով կերել են։

Միայն ժ.Թ. դարի առաջին կեսին բազմաթիվ հետազոտողներ արժեքավոր տեղեկություններ եւ հնագիտական նյութ են ձեռք բերում Զատկի կղզու բնիկների կենցաղի եւ հասարակական վիճակի վերաբերյալ (անգլիացի ազգագրագետ Կ. Ռաուլթը, ֆրանսիացիներ Ա. Լավաշերի եւ Ա. Մետրո, կաթոլիկ քարոզիչներ Էժեն Էյրո, Սեբաստիան Էնգլերտ եւ այլք)։ 1804 թ. կղզի այցելել է ռուս ծովագնաց Յու. Լիսյանսկին, որը նույնպես հակիրճ տեղեկություններ է հաղորդում բնիկների կենցաղի

³ Տե՛ս W. J. THOMSON, Te Pito te Henua, or Easter Island (Report of the U.S. National Museum for 1889), Washington, 1891, W. Knoche, Die Osterinsel. Conception, 1925, A. METRAUX, Ethnology of Easter Island, Honolulu, 1940, S. ENGLERT, Tierra de Hotu Matua, Historia, Etnología y lengua de la isla de Pascua, Padre las Casas (Chile), 1948, TH. S. BARTHEL, Das achte Land, München, 1974:

մասին: Ռուսներին մասնավորապես մեծ հիացմունք են պատճառել կղզու՝ փարթամ բուսականությանը ծածկված ափերը, ռապանուլցիների՝ բավականին բարեկարգ կացարանները, որոնցից ոչ շատ հեռու փոված էին բանանի եւ շաքարեղեգի խնամված տնկադաշտերը⁴:

Ռապանուլցիներն ապրում էին երեք տիպի կացարաններում. քարայրներում, կիսագետնափոր տներում եւ ադամաթզի տերեւներով ու խոտով ծածկված առաստաղ ունեցող կացարաններում: Օվկիանոսի ալեբախության հետեւանքով Զատկի կղզու ամբողջ ընդերքը չափազանց հարուստ է քարայրներով, որոնք բնիկների համար ծառայում էին եւ որպես կացարաններ, եւ որպես հուսալի թաքստոցներ միջտոհմային ընդհարումների եւ թշնամիների հարձակումների ժամանակ: Հնտանեկան քարայրներում ավելի ուշ թաքցնում էին նաեւ եղեգի մեջ փաթաթված փոքրիկ արձանիկներ, մահացած նախնիների մազափնջերը, «խոսող տախտակները» եւ թանկարժեք այլ իրեր: Քարայրի մուտքը խիստ գաղտնի էր պահվում եւ մահվանից առաջ փոխանցվում էր նախնիների որդուն:

Քարեդարյան կենցաղով ապրող ռապանուլցիների ընտանեկան կապերի հիմնական ձեւը մենամուսնության անցնող ընտանիքն էր: Բազմակնությունն առկա էր միայն առաջնորդների, տոհմապետերի, ցեղապետերի եւ հարուստ ռապանուլցիների շրջանում: Որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ կանայք ապրում էին առանձին կացարաններում, բայց երբեմն նաեւ՝ նույն հարկի տակ: Բազմամուսնությունն ավելի շուտ առկա էր տեսականորեն, քան իրականում, քանի որ կղզում տղամարդիկ ավելի քիչ էին, քան կանայք: Միկլուխո-Մակլայը վկայում է, որ ԺԹ. դարի վերջում այդ անհամաչափության պատճառով սկսեցին կնության առնել 10–11 տարեկան աղջիկներին: Նման ընտանիքներում երեխաներ չէին ծնվում, իսկ կանայք անժամանակ մահանում էին⁵:

Կղզում գոյություն ուներ ամուսնությանը խոչընդոտող միայն մեկ սահմանափակում՝ այսպես կոչված տաբու՝ արյունակցական կապը: Ամուսնական հարաբերություններ թույլատրվում էին միայն այն դեպքում, երբ ազգակցության աստիճանը հասնում էր 5–6 պորտի: Այս սահմանափակումը գործում էր ամենայն խստությամբ: Դրա մասին վկայում են տոհմաժառերը, որոնք կազմվում էին նույնպիսի բժախնդրությամբ: Ի

⁴ Ску И. Фёдорова, Говорящие дощечки с острова Пасхи, Дешифровка, чтение, перевод, Санкт-Петербург, 2001, էջ 14–28:

⁵ Ску Н. Н. Миклаухо-Маклай, Собрание сочинений, Москва, 1950, 4. 1, էջ 48–49:

տարբերություն խաղաղօվկիանոսյան այլ փոքր կղզիների, որտեղ բնակիչների փոքրաթիվ խմբերի մեկուսացվածության պատճառով հնարավոր էր դարձել արնապղծությունը, Զատկի կղզում այն համարվում էր ամենասարսափելի հանցագործությունը, որը պատժվում էր մահով: Այդ մասին վկայում է ռապանույան բանահյուսությունը:

Ըստ առաջին հետազոտողների՝ ԺԸ. դարում կղզում տիրում էին նախնադարյան տոհմատիրական կարգեր: Ռապանույցիներն ապրում էին մինչև չորս սերունդ ընդգրկող մեծ ընտանիքներով, որտեղ մեծագույն հարգանք էին վայելում նախնիները՝ պապը եւ տատը (ողջ թե մահացած) եւ ծնողները: Կղզում հայտնի էր 10–12՝ մի քանի մեծ ընտանիք ընդգրկող միավորում՝ տոհմ:

Ամուսնացած աղջիկները լքում էին հայրական տունը եւ տեղափոխվում ամուսնու տուն: Արյան մաքրությունը եւ ունեցվածքի ընդլայնմանը հետամուտ առաջնորդներն իրենց տղաների համար հարսնացու էին ընտրում շատ վաղ տարիքում, երբ նրանք 10 տարեկան էին: Նշանելուց հետո փեսացուի ծնողները փոքրիկ հարսնացուին բերում էին իրենց տուն եւ դաստիարակում որպես հարազատ աղջիկ: Բավականին հասարակ հարսանեկան արարողության հիմնական մասը կազմում էր ծիսական հյուրասիրությունը:

Ինչպես նշում է Ա. Մետրոն, աշխատանքի սեռահասակային բաժանումը թույլ էր տալիս մեծ ընտանիքներում պարտականությունների արդար բաժանում կատարել: Պապը եւ տատը կատարում էին թեթեւ աշխատանքներ, հիմնականում խնամում էին երեխաներին, տարիքով մեծ թոռներին սովորեցնում էին անհրաժեշտ գիտելիքներ եւ հմտություններ: Ընտանիքի հայրը հողամասի եւ ունեցվածքի տերն էր, իսկ նրա կինը հետեւում էր ամբողջ տնտեսությանը⁶:

Ավագ որդին փորում էր հողամասը, զբաղվում էր ձկնորսությամբ եւ թռչունների որսով, իսկ նրա կինը ճաշ էր պատրաստում (օրը 2 անգամ), խնամում էր տնկադաշտը, ծեծում էր ծառերի նրբակեղեւը՝ տապա⁷ ստանալու համար, կարում էր զգեստներ, գործում ծղոտե գլխարկներ եւ փռոցներ:

⁶ SÉA A. MÉTRAUX, Ethnology of Easter Island, Honolulu, 1940, էջ 111. И. Фёдорова, Говорящие дощечки с острова Пасхи, Дешифровка, чтение, перевод, Санкт-Петербург, 2001:

⁷ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Հայերեն «թութ» եւ «մահուդ» բառերի ծագումը, ստուգաբանությունն ու նախնական իմաստը, ԵՊՀ-ի գիտական հոլովածների ժողովածու, Երեւան, 2017, էջ 180–192:

Երեխաները մասնակցում էին տան բոլոր գործերին՝ կատարելով պապի, տատի, երբեմն նախապապի եւ նախատատի հանձնարարությունները: Նրանք դաստիարակվում էին աշխատանքի մեջ եւ միջոցով: Տղաները հայրերի հետ գնում էին ձկնորսության, օգնում էին ձկնորսական կեռիկներ պատրաստելիս: Աղջիկները խնամում էին փոքրերին եւ պապիկ-տատիկներին, տան բոլոր գործերում օգնում էին մորը, տեղատվությունից հետո ծովափին հավաքում էին ծովային կրիաներ, խխունջներ եւ կակղամորթներ:

Ընտանիքների անդամ էին համարվում նաեւ մոտիկ ազգականների որբ մնացած երեխաները: Ռապանուլցիները պահում էին հետեւյալ կարգը. որբ մնացած երեխան ինքն էր ընտրում, թե որ ազգականի մոտ կգնա եւ այն պահից, երբ նա գալիս էր այդ ազգականի տուն, համարվում էր այդ ընտանիքի անդամ: Այս որդեգրված երեխաներն ընտանիքի լիիրավ անդամներ էին եւ դաստիարակվում էին որպես հարազատ երեխաներ:

Երեխաները շատ ժամանակ էին անցկացնում խաղալով. նրանց համար ձեռքը, աչքը եւ մարմինը մարզող, ճարպկություն եւ հնարամտություն զարգացնող խաղերը չափազանց կարեւոր նշանակություն ունեին: Նրանք սիրում էին խաղալ հոլով, բաց թողնել «թռչող օձ», ծառի կեղեւակտորի վրա նստած սղղալ լեռան լանջով, Տոնգարիկի սրբարանի մոտ աճած ծառից եւ Ռանո Ռարակու լեռան լանջի ժայռից կապած պարանով ներքեւ իջնել, պարան էին խաղում, որ կոչվում էր kaukau:

«Դպրոցում» սովորեցնում էին ծիսական երգեցողություն, զինանիշագիտություն, աստղագիտություն, համեմատությունների, փոխաբերությունների, պատկերավոր խոսքի կառուցման արվեստ, դիցաբանական գիտելիքներ, գրել եւ կարդալ: Այստեղ սովորելու իրավունք ունեին միայն առաջնորդների տղաները, հատկապես՝ հնագույն miru (միրու) ցեղի առաջնորդներին:

Դժվար է առնվազն 40 000–50 000-ամյա վաղեմության դարաշրջանի կյանքն անադարտ պահած այս ընտանեկան կացութաձեւի եւ հարաբերությունների մեջ մատնանշել այնպիսի առանձնահատկություններ, որոնցով հնարավոր լինեք ապացուցել, որ խոսքը քարեդարյան հայ ընտանիքի մասին է: Սակայն այստեղ է, որ օգնության է գալիս լեզուն, որովհետեւ, ինչպես հայտնի է, «...միայն լեզվաբանական մեթոդներով

կարելի է հավաստիորեն պարզել որոշակի հնագիտական մշակույթի կրողների էթնո-լեզվական պատկանելությունը»⁸:

Ազգակցական կապեր մատնանշող բառերը՝ որպես լեզուների հնավանդ շերտին պատկանող իրողություններ, լեզվի հիմնական բառապաշարի կարեւոր բաղկացուցիչներից են, այդ իսկ պատճառով՝ լեզուների ցեղակցական կապերի բացահայտման վստահելի միջոց: Հնդեւրոպական լեզուների բառապաշարի այս կարեւոր մասը բավականին մանրամասնորեն ուսումնասիրված է: Համեմատական ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է հայերենին վերաբերող չափազանց ուշագրավ մի փաստ. հայերենը նախանձելի պահպանողականություն է դրսեւորել ազգակցական եզրաբանության նկատմամբ՝ պահպանելով հին հնդեւրոպական ազգակցական բոլոր եզրերը՝ ի տարբերություն հնդեւրոպական մյուս լեզուների, որոնք կորցրել են ազգակցական բազմաթիվ կամ բոլոր եզրերը⁹: Այս երեւույթն առավել եւս հատկանշական է այն պատճառով, որ ընդունված կարծիքի համաձայն՝ հայերենը կորցրել է իր հնդեւրոպական բառապաշարի պատկառելի մասը:

Պոլինեզիական լեզուների հնավանդ շերտին պատկանող ազգակցական կապեր մատնանշող եզրերը, բացառությամբ մի քանիսի, համընկնում են պոլինեզիական բոլոր լեզուներում եւ արտահայտում են տոհմի բոլոր անդամների միջեւ առկա հարաբերությունները: Զատկի կղզու մեզ հասած բանահյուսական ժառանգության մեջ բարեբախտաբար լայնորեն ներկայացված է բառապաշարի այս անչափ կարեւոր շերտը: Ազգակցական հարաբերություններ մատնանշող ռապանուերեն բոլոր բառերն ու բառակապակցությունները եւս, ինչպես եւ սպասելի էր, աննշան բացառություններով, համընկնում են պոլինեզիական մյուս լեզուների համապատասխան եզրերին:

Ազգակցական հարաբերություններ մատնանշող ռապանուերեն բառերն ունեն ինչպես բնիկ հայերեն, այնպես էլ չստուգաբանված եւ փոխառություն համարվող բազմաթիվ հայերեն զուգահեռներ:

Բերենք օրինակներ.

⁸ Տե՛ս <http://gumilevica.kulichki.net/HEU/heu1104.htm> Ս. Баян, Древняя Европа и индоевропейская проблема:

⁹ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Շնորհ ի վերուստ. առասպել, ծես, պատմություն. Հոգիվածների ժողովածու՝ նվիրված Սարգիս Հարությունյանի ծննդյան 80-ամյակին, Երևան, 2008, էջ 10–18:

ռապան. tomo «ափ իջնել», «բնակվել», 1. «փարայրներ», 2. «կիսագետնափոր տներ», 3. «բանանի տերեւներից ու խոտից պատրաստված ծածկով կացարաններ» — *բնիկ հայ.* տուն «տուն» (*հ.-ե.* *dem-, *dem(o)-) «կառուցել, իրար հարմարեցնել»-ից),

ռապան. paepae (pae-pae) «տուն» — *բնիկ հայ.* բայ «որջ» (*bhuā-t- (?), *bheu-)¹⁰, բրբ. բայել (*հտրջ.*) «միշտ տանը նստել մնալ», բայլախորան (*ըլել*) «կորչել» (*Սբ.*) ասվում է այն կնոջ մասին, որը տան հոգսը, գործը թողած՝ հարեւանների տներում է թափառում, բայոց (*հտրջ.*) «արջի ձմեռային քնավայրը», բայմայ (*ՀՃՆ.*) «սկեսուր» (=բայ-մայր, բրբ. մայ «մայր»), գրբ. բոյն «բույն», բրբ. պուն «բուն»,

ռապան. hare₁ «խրհիթ» — *բնիկ հայ.* այր «փարայր, փարանձավ» (*antrio-, antrom- «այր, փարայր»), հիւղ (*հյուղ*), խուղ «հյուղ, խրհիթ, խեղճ տնակ», բրբ. (*Ձթ.*) հուղ «հողաշեն խրհիթ» (*khu-lo-՝ * (s)keu- «ծածկել, փաթաթել» արմատից),

ռապան. pakipaki (paki-paki) «տան նախամուտք» — *հայ.* բակ «տան բակ, տան շուրջը եղած գալիքը», «ոչխարների փարախ», համարվում է *փոխառություն վրաց.* baki «փարախ»-ից, *անհայտ ծագման հայերեն փակ* «փակ, փակված»,

ռապան. aroa, roa «արական, տղա, արու» — *բնիկ հայ.* առն (*այր*) «տղամարդ»,

ռապան. ahine, hine «կանացի», va-hine «կին» — *բնիկ հայերեն* կին «կին»,

ռապան. tama₁ 1) «ընձյուղ, շիվ», 2) «երեխա» — *բնիկ հայ.* զարմ 1) «ժառանգ, որեւէ ցեղի պատկանող անհատ», 2) «տոհմ»,

ռապան. tama aroa — *հայ.* զարմ այր/առն (*տե՛ս* Չարմայր *անձնանուն*),

ռապան. tama ahine — *հայ.* զարմ կին,

ռապան. tupuna (tu-puna) «պապ», «սկիզբ տվող, սկզբնաղբյուր» — բուն, գ-բուն «ծառի բուն», «ծննդաբանականի բունը»,

ռապան. tupuna tama aroa «պապ» — գբուն զարմ այր/առն «պապ»,

ռապան. tupuna tama ahine «տատ» — գբուն զարմ կին «տատ»,

ռապան. tu-pun-ga (*տոնգա*) «նախնիներ» — գ-բուն-ք «բներ», իմա՝ «սկիզբ տվողներ», «սկզբնավորողներ»,

ռապան. maku puna «թոռ» — *հայ.* մակ «վրա» + բուն, իմա՝ «ծննդաբանականի բնի վրա աճած...»,

¹⁰ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 116:

ռապան. *matua/metua* «հայր, մայր, ծնողներ» — բնիկ հայ. մայր «մայր» (հ.-ե. **māter*-), տե՛ս հարք «հայրն եւ մայրն, ծնողք»¹¹,

ռապան. *matua tama aroa* «հայր» — «ծնող զարմ(ի) այր/արու», տե՛ս հայր = «այր կամ արու ծնող զաւակի»¹²,

ռապան. *matua tama hine* «մայր» — «ծնող զարմ(ի) կին»,

ռապան. *matua kore* «որք, ծնողագուրկ» — հայ. «մայր, հայր + կոր արմատ», որից՝ «կորուստ, կոր-ել/ած» (**gʷer*- (?))

ռապան. *ere* «եղբայր» — հայ. բրբ. էրիկ «ամուսին»,

ռապան. *taina, teina/kaina, keina* «քույր» — բնիկ հայերեն քենի «մեկի կնոջ փայրը» (հմմտ. խեթ. *kaina* «ազգական, ցեղակից»),

ռապան. *tao*₅ «ամուսնու փայրը» — բնիկ հայերեն տալ «ամուսնու փայրը»,

ռապան. *haana* «փեսա, աներորդի, քենակալ, տեգր» — բնիկ հայ. աներ/հաներ «կնոջ հայրը», որից՝ «աներորդի, աներձագ», «աներանք, աներոջ տունը»,

ռապան. *mata*₃ «կանաչ», «տհաս» — բնիկ հայ. մատաղ «մատղաշ մանուկ, մատաղ հորք» (**mad* — «թաց, խոնավ, կաթել. հյութեղ» արմատից),

ռապան. *raga*, ունի իմաստային սահմանափակում. նշանակում է «երեխա, որը ծնվել է այն ժամանակ, երբ ծնողները փրկվում էին փախուստի դիմելով» — հայերեն բրբ. րախա, երախայ, երեխա «երեխա», նույնը՝ հավայերեն *laga* — անհայտ ծագման լաճ «ուստը, մանչ, տղայ», բրբ. (Ուրմ, Պլ, Սբ, Խտջ, Խրբ, Տրն, Սս, Մշ, Վն, Մկս) լաճ/լաշ/լաջ «մանչ, տղայ», (Գնձ) լաճ «անտեր-անտիրական մեծացած տղա»,

ռապան. *manu, manuka* «մարդու փոքրիկ արձանիկ» — հայ. մանուկ «երեխա, մանկահասակ» (**mənu*- **men*- «փոքր, փոքրացնել, առանձին, մեկուսի»),

ռապան. *nua*₁ արխ. «մայր», *nua hine* «պառավ կին, հարս, տալ» — բնիկ հայ. արխ. նու (նուանք, նովանք) «մայր, հարս, տալ» (հնխ. **snuso*-),

ռապան. *neru* «աղջիկներ, որոնց մաշկի ներմակությունը պահպանելու նպատակով երկար ժամանակ պահում էին ֆարանձավներում» եւ *nire* «կույս» — բնիկ հայ. ներ, նեար, ներ (սեռ.՝ նիրի) «տագերակին, մյուս կին» (հնխ. **énetēr*),

¹¹ ՆՀԲ, հտ. Բ., Վենետիկ, 1836:

¹² Անդ:

ռապան. kenu «ամուսին» — բնիկ հայերեն կին «կին» (հ.-ե. *guenā-),
քենի (*svenyo- *svo- «իր, յուր»),

ռապան. korokoro «տարեց մարդ» — հայերեն կորակոր/կոր ի կոր
«կոացած, զլխկոր», (h/k) հայր, սեն.՝ hor (հար > հոր), հոր (հորի, հորիւ)
«փեսա», նաեւ horու (հարու) «անհարազատ, խորթ հայր»,

ռապան. uka «աղջիկ, երիտասարդ կին», մանրի uha, թախթերեն uha
«կենդանիների էգը», «կին» — հայերենի իգական սեռի ցուցիչ — ունի վեր-
ջածանց (համարվում է փոխառություն իրանական լեզուներից, բայց,
ինչպես նկատում է Գ. Զահուկյանը, «ստուգաբանության մեջ եղած փոր-
ձերն առայժմ համոզիչ չեն») ¹³,

ռապան. poki «երեխա» — բնիկ հայ. փոքր (սեն.՝ փոֆու, բցո. փոֆուէ,
հզն. փոֆումֆ, փոֆունց) «փոֆր» (*phuku-, *pok-),

ռապան. koro₂ առխ. «հայր» — բնիկ հայ. կոր «ծագ» (*g^uor-) ¹⁴ եւ այլն:

Ընդհանուր առմամբ ստուգաբանվել են ազգակցական հարաբե-
րություններ մատնանշող 67 բառ եւ բառակապակցություն, որոնցից
3-ը թեական ընդհանրություն ունեն հայերենի հետ, 1-ի զուգահեռը չի
գտնվել, իսկ 63-ը ունեն բնիկ հայերեն, բարբառային ու անհայտ ծագ-
ման 75-ից ավելի հայերեն զուգահեռներ: Ազգակցական հարաբերու-
թյուններ մատնանշող եզրերի հայերեն զուգահեռները փաստում են, որ
խոսքը նախնադարյան հայ ընտանիքի մասին է:

РЕЗЮМЕ

Самые ранние сведения об армянской семье, образе жизни и жилье дошли до нас посредством древнегреческих и римских источников. О древнейшей доисторической семье можно составить представление, изучив новоявленные армяно-полинезийские разнородные общности. Выявленные между армянским и полинезийским языками лексические сходства, в частности, армянские параллели полинезийских слов, указывающие на разные родственные связи, доказывают, что речь идет о древнейшей армянской семье. Свидетельства

¹³ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 813:

¹⁴ Ազգակցական հարաբերություններ մատնանշող պոլինեզիական եզրերի առավել մանրամասն ստուգաբանությունը՝ Լ. Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Հայ-պոլինեզյան լեզվամշակութային ընդհանրություններ, Երեւան, 2015, էջ 139–161:

первых исследователей о полинезийской семье помогают сформировать представление о древнеармянской семье и образе жизни.

SUMMARY

The earliest information about the Armenian family, lifestyle and housing came to us through ancient Greek and Roman sources. One can get an idea of the most ancient prehistoric family by studying the newly discovered Armenian-Polynesian variegated affinities. The lexical similarities revealed between the Armenian and Polynesian languages, in particular, the Armenian parallels of the Polynesian words, indicating different family ties, prove that we are talking about the oldest Armenian family. The references of the first researchers to the Polynesian family help to form an idea of the ancient Armenian family and way of life.

